

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԵՐԻ ԱՐԱՐԱՏԻ

**ՈՒՏՈՊԻԱՆ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻՈՆՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՆԱԽԱԳԻԾ**

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածովի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ասենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Էդ. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան
փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, դոցենտ Մ. Հ. Դեմիրճյան

Առաջատար կազմակերպություն՝

«ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտ»

Ասենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 4-ին՝
ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի
Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա,
Երևանի պետական համալսարան:

Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական
աշխատողների ընթերցարահում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

փ.գ.թ., դոցենտ Գ.Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղազոդության արդիականությունը: Մարդկության պատմությունը բնական աշխարհից սահմանազատելու և «սոցիալական աշխարհ» ստեղծելու մի անավարտ ստեղծագործություն՝ է՝ այլեցուն հաջողությունների և ձախողումների բազմաթիվ դրվագներով։ Պատմության պարադքսներից մեկն այն է, որ մարդկության երազանքների և իրականության միջև հակասությունն անհայթահարելի է, և իդեալական-կատարյալ հասարակություն ունենալու այդ անբավ ձգտումը մշտապես սնում է ուսուփական նախագծեր առաջարկելու և կենսագործելու մարդկային երազանքների մարտկոցը։ Այս առումով ուսուփակային՝ որպես իդեալական հասարակության սոցիոմշակութային նախագծի հիմնախնդիրն առավել քան արդիական է նաև մեր օրերում։ Պատահական չէ, որ ուսուփահաները՝ մեկ որպես անհնարինը հնարավոր դարձնելու երազանքը ու սոցիալական երևակայությունն, մեկ որպես ապագայի սոցիոմշակութային նախագիծ և պատմական առաջնթացի շարժիչ ուժ, որոց դեպքերում նաև որպես չարիքի աղբյուր համարվող սոցիոմշակութային կեղծ արժեք, շարունակում են մնալ տարբեր գիտակարգերի ուսումնասիրությունների կենտրոնում։

Ձևավորվելով ներկայում՝ ապագայի ուսուփական նախագծերը արտացոլում են սոցիալական համակարգի հնարավորությունների ընդլայնման մասին հասարակության պատկերացումներն ու ակնկալիքները, որոնք իրենց հերթին մատնանշում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների, իդեալների ու կենսական դիրքորոշումների բնույթը ու բովադակությունը։ Այս իմաստով հետազոտվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հնարավորություն է տախս վեր հանել իդեալական հասարակության մասին ուսուփական նախագծերի պատմամշակութային համատեքստը, պարզաբանել սոցիալական աշխարհի կատարելագործման մարդկային հավակնությունների ու ակնկալիքների էվլուսիայի տրամաբանությունը։ Խնդիրն այն է, որ ուսուփական ցանկացած նախագիծ պատմամշակութային երևույթ է, որի հիմքում ընկած են տվյալ ժամանակաշրջանում գործող հասարակարգի բննադատական ոգին, մարդկանց մետաֆիզիկական պահանջմունքները (բարիք, օրենք, Աստված և այլն) և քանականությունը։

Այս առումով իդեալական հասարակության ուսուփական նախագծերի տեսական վերլուծության արդիականությունը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ ժամանակակից աշխարհում ընթացող քաղաքակրթական գործընթացները մի կողմից նպաստում են սոցիալական իրականության և ուսուփայի մերձեցմանը, մյուս կողմից, սակայն, նկատվում է, որ տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների մեր դարաշրջանում հաճախ ոչ թե սոցիալական իրականությունն է մոտենում իդեալին, այլ իդեալը՝ կյանքին՝ մեկ անգամ ևս փաստելով, որ ժամանակակից մարդու իդեալները դարձել են ավելի չափավոր ու «երկրային»։ Պատահական չէ, որ եթե դասական ուսուփային իդեալական հասարակության մասին գեղարվեստական երևակայության արդյունքում ծնված իրատեսական հիմքեր չունեցող «վիպերգություն» էր, ապա ժամանակակից աշխարհում ուսուփական նախագծերն աստիճանաբար ձերբագատվում են գեղարվեստական երևակայության

կապանքներից և վերածվում կենսական հնարավորությունների բացահայտման միջոցի:

Հիմնահարցի արդիականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ սոցիալական կյանքի կազմակերպման մշակույթները ոչ միայն դեկավարվում են ռացիոնալ ու իրատեսական սկզբունքներով, այլև ինչ-ինչ տրանսցենդենտալ գաղափարներով, որոնք ունեն ուսուցիչական և գաղափարախոսական բնույթ և ծագում են ըստ դրանց հարաբերակցության գործառությունների տարրերության, իրագործման հնարավորությունների ճշգրտման անհրաժեշտության: Առավել ևս որ ժամանակակից աշխարհում գաղափարախոսությունները կատարում են սոցիալական իրականության «քողարկման», իսկ ուսուցիչական նախագծերը՝ «քողագերձման» գործառույթ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ժամանակակից աշխարհում ընթացող սոցիոմշակութային, մարդաբանական և քաղաքակրթական փոխակերպումների արդյունքներն ու դրանց հետևանքներն ապագայի տեսանկյունից իմաստավորելու անհրաժեշտությամբ, քանի որ այդ ամենի հետևանքով մարդկությունն աստիճանաբար ձերբագաւում է արդիակության տեխնոծին պարտադրանքներից և փորձում նոր պայմանների տրամաբանության շրջանակներում ուրվագծել ապագայի այնպիսի նախագիծ, որում մարդկային համակեցությունը, կատարյալ սոցիալ-քաղաքական կառուցվածքը, արդարության, հավասարության և բարեկեցության մասին պատկերացումները կինեն առավել ներդաշնակ ու կատարյալ:

Հիմնախնդրի գիրարեսական մշակվածության ասթիճանը:

Ալենախոսության հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ դժվար է գտնել ընդհանրական մոտեցումներ: Ուսուցիչայի վերաբերյալ համակարգային առաջին ուսումնասիրություններն սկսել են իրականացվել 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբին: Այն քննարկելի է փիլիսոփայական, սոցիոլոգիական, մշակութաբանական, գրականագիտական և այլ գիտակարգերի համատեքստում, որոնցից յուրաքանչյուրը, ներքին մեթոդաբանական և տրամաբանական առանձնահատկություններից ենթելով, շատ հաճախ ուսուպիչային օժտել է տարրեր և երեմն էլ հակասական իմաստային ծանրաբեռնվածությամբ: Ընհանրացնելով մասնագիտական գրականությունում առկա վերլուծությունները՝ վերջիններս պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի:

○ Ուսումնասիրողների մի խումբն ուսուպիան դիտարկում է որպես սոցիալական ճգնաժամերի ախտանիշ (Ախնա Ֆ., Մանհեյմ Կ., Լասկի Մ., Պոլակ Ֆ.):

○ Հետազոտողների մեկ այլ խումբ ուսուպիան սահմանում է որպես կեցության հիմնային բաղադրիչ ու բաղկացուցիչ, գիտակցության և մշակույթի բնութագրական հատկանիշ, որպես մարդկային երևակայության և ստեղծագործ մտքի ընդունակություն (Ախնա Ֆ., Բլոխ Է., Էլիադ Ե., Օրտեգա-ի-Գաստեն Խ. և այլք):

○ Հետազոտողների երրորդ խումբը ուսուպիական գիտակցության էությունն ու բնույթը քննարկում է ուսուպիաների տեսակների և դրանց պատմական զարգացման համատեքստում (Բատալով Էդ., Մեմֆորդ Լ., Շացլիկովա Վ. և այլք):

○ Հետազոտությունների մեկ այլ խոսմբ նվիրված է ապագայի նախագծման հարցում ուսուայի և առասպեկտի ուսուայի և գաղափարախոսության առնչությունների վերլուծությանը (Բարտ Ռ., Դարենդորֆ Ռ., Ժիմել Ս., Լասկի Մ., Լուս Ա., Մանեկյան Կ., Պոպեր Կ., Սորել Ժ. և այլք):

○ Տեսաբանների մի մասը հիմնախնդրին անդրադառնում են հետարդիականության սոցիոմշակութային տարածության ձևավորման համատեքստում (Բողրիար Ժ., Դեյնո Բ., Գվատտարի Ժ., Լուկաչին Ա., Ֆուկո Մ. և այլք):

○ Տեսաբաններից ոմանք ուսուային ուսումնասիրում են զանգվածային գիտակցության վրա վերջինիս ազդեցության և քաղաքական մանիպուլացիայի այլ տեխնոլոգիաների հետ համադրման համատեքստում (Արենդթ Հ., Բարտ Ռ., Էլիադե Մ., Լեբոն Գ., Յունգ Կ., Ֆրոնժ Զ. և այլք):

○ Ուսուայի հիմնախնդրը քննարկել է նաև ուսուայի-հակառատուայի հակադրության քննական վերլուծության համատեքստում (Բերդյան Ն., Պոպեր Կ., Հայեկ Ֆ. և այլք):

○ Հիմնախնդրին անդրադարձ է կատարվում նաև ֆուտուրիստական կանխատեսումների և զարգացումների համատեքստում (Թոփլեր Էլ., Յասպերս Կ., Ֆուլկույամա Ֆ. և այլք):

Հարկ է մեկ անգամ ևս նշել, որ ուսուայի սոցիալ-փիլիստիկային վերլուծությունները հազվադեպ են կրել համակարգային բնույթ, ինչից գերծ չեն նաև հիմնախնդրին առնչվող հայալեզու սոցիալ-փիլիստիկային վերլուծությունները: Հայկական մասնագիտական գրականության մեջ առկա է հիմնախնդրին առնչվող հարակից թեմաների և խնդրների վերլուծության տեսական հարուատ ժառանգություն, ինչպես օրինակ՝ փոխակերպական հասարակություններին, սոցիոմշակութային փոխակերպումներին, ապագայի սոցիոմշակութային մոդելավորմանը, քաղաքական մանիպուլատիվ տեխնոլոգիաներին նվիրված վերլուծությունները, որոնք առկա են ժամանակակից հայ տեսաբանների աշխատություններում (Հարությունյան Էդ., Հարությունյան Մ., Հովսեփյան Ա., Միրզոյան Վ., Մկրտչյան Ա., Պողոսյան Գ., Սարգսյան Ա., Սողոմոնյան Գ., Միրումյան Կ. և այլք): Սակայն, հարկ է փաստել, որ ուսուայի որպես սոցիոմշակութային առանձին երևոյթի սոցիալ-փիլիստիկային վերլուծությունը հայ մասնագիտական գրականության մեջ իրականացվում է առաջին անգամ:

Հետազոտության օբյեկտը ուսուայի որպես ապագայի մոդելավորման սոցիոմշակութային նախագծի ֆենոմենն է:

Հետազոտության առարկան ուսուայի որպես ապագայի մոդելավորման սոցիոմշակութային նախագծի գործառնական առանձնահատկությունների սոցիոմշակութային վերլուծությունն ու հիմնավորումն է:

Հետազոտության նպարակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ուսուային որպես ապագայի մոդելավորման սոցիոմշակութային նախագիծ, ինչը կանխորոշել է վերլուծության տրամարանությունն ու հնարավորություն

ընձեռել ի հիմնախնդրի շրջանակներում առանձնացնել տեսական և գործնական նշանակություն ունեցող երկու ենթահարցեր.

- ուսուպիան որպես այլընտրանքային սոցիալ-քաղաքական նախագիծ,
- ուսուպիայի սոցիոմշակութային առանձնահատկություններն արդիականության համատեքստում:

Այս ենթահարցերի ուսումնասիրման և դրանց առանձնահատկությունների բացահայտման նպատակով առաջարկվել են հետազոտական մի շարք խնդիրներ.

- վերլուծել ուսուպիան որպես սոցիոմշակութային երևույթ,
- ներկայացնել ապագան որպես սոցիալական աշխարհի նախագիծ,
- վերլուծել և ներկայացնել ուսուպիան որպես սոցիալական ճգնաժամերի ախտանիշ և համարակության ինքնաճանաչման միջոց,
- բացահայտել ուսուպիայի և հակառակութայի փոխհարաբերակցությունը սոցիալական իրականության համատեքստում,
- բացահայտել ուսուպիայի և առասպելի փոխազդեցությունները,
- դիտարկել ուսուպիաների և գաղափարախոսությունների հարաբերակցությունը ապագայի մոդելավորման նախագծերի համատեքստում,
- վերլուծել ուսուպիան քաղաքական մանիպուլյատիվ տեխնոլոգիաների համատեքստում,
- ուսումնասիրել ուսուպիայի դրսևորման նոր հնարավորությունները ժամանակակից աշխարհին բնորոշ սոցիոմշակութային և քաղաքակրթական մարտահրավերների տեսանկյունից,
- «Վիրտուալ ուսուպիան» դիտարկել որպես արդիականությանը բնորոշ ուսուպիական իրականության տարատեսակ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Այտենախոսության համար մեթոդաբանական հիմքեր են պատմականության և տրամաբանական վերլուծության միասնության սկզբունքը, համարական-վերլուծական, համեմատական, պատմական-նկարագրական, ինչպես նաև համընդիմանոր գիտական մեթոդներից մոդելավորման, ինդուկցիայի, դեղուկցիայի մեթոդները: Պատմականության մեթոդը կիրառվել է ուսուպիայի ծագումն ու էվոլյուցիան նկարագրելու համար: Համարական-վերլուծական մեթոդի շնորհիվ իրականացվել է հետազոտության առանձին առարկաների համարական վերլուծություն, բացահայտվել են վերջիններիս տրամաբանական և իմաստային կապերը: Ուսուպիայի քաղաքական և սոցիոմշակութային դրսևորումների բացահայտման նպատակով կիրառվել է համեմատական մեթոդը, ինչի շնորհիվ վեր են հանվել դասական և ժամանակակից ուսուպիական նախագծերի, հակառակութայի, առասպելի, գաղափարախոսության ընդհանրություններն ու տարբերությունները: Հետազոտության տեսական ընդհանրացումների, արդի սոցիոմշակութային իրողությունների ընդգրկուն հետազոտության համար օգտագործվել են սոցիալական փիլիսոփայության, սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի և մշակութարանության միջջփառագային հետազոտական սկզբունքները:

Հետազոտության գիրական նորույթը: Համակողմանիորեն վելրուծելով ուսուափայի՝ որպես սոցիալ-քաղաքական, սոցիոմշակութային նախագծի առանձնահատկությունները, ուսուափայի տեղն ու դերը ապագայի մոդելավորման հարցում, արվել են գիրական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք եղակացություններ ու ընդհանրացումներ.

○ Ուսուափայն դիտարկելով որպես սոցիոմշակութային յուրօրինակ նախագիծ՝ հիմնավորվում է այն թեզը, որ ապագայի մոդելավորման շնորհիվ ուսուափայն ընդլայնում է սոցիալական իրականության վերափոխման հնարավոր սահմաններ՝ ըստենթելով ապագայի ցանկալի և անհրաժեշտ մոդել, ինչն իր հերթին իրականանում է ներկա սոցիոմշակութային իրականության և նրա սոցիալական ինստիտուտների ըննադատության շնորհիվ:

○ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուափական հայեցակարգերի առաջադրումն ունի որոշակի սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային նախադրյալներ, ցոյց է տրվել, որ դրանք սոցիալական ճգնաժամերի ախտանիշներ են, ինչը հատկապես բնորոշ է փոխակերպական փոլում հայտնված հասարակություններին: Այս համատեքստում հիմնավորվել է նաև այն դրույթը, որ ճգնաժամային հասարակություններում ուսուափան, ի թիվս այլ գործառույթների, կատարում է նաև սոցիալական իրականության քննադատական վերլուծություն և համակարգի բարեփոխման գործառույթ:

○ Հիմնավորվել է այն թեզը, որ ապագայի մոդելավորման ուսուափական նախագծերին զրկահետ հաճախ ձևավորվում են նաև հակառատուափաններ, որոնք մատնանշում են արդեն իսկ առաջադրված ուսուափանների իրագործման հնարավոր բացասական հետևանքները: Եվ այդ հմաստով հակառատուափան կարելի է բնութագրել որպես ուսուափական նախագծերին «ընդդիմախոս ուսուափա»:

○ Ուսուափաններն ու գաղափարախոսությունները դիտարկելով որպես հասարակական կյանքի կառուցարկման նախագծեր՝ հիմնավորվել է այն թեզը, որ ժամանակակից աշխարհում դրանց իրացման հնարավորություններն ու գործառույթները էապես փոխվել են և եթե արդի աշխարհում գաղափարախոսությունների հիմնական գործառույթներից մեկը գործող սոցիալական համակարգի պահպանումն է, ապա ուսուափանները միտված են սոցիոմշակութային նոր համակարգերի ձևավորմանը և, ունենալով տեխնիկական հիմնավորումներ, դարձել են ավելի իրագործելի:

○ Հաշվի առնելով այն իրողությունը, որ ուսուափաններն իրելական հասարակության նախագծեր են և նրանցում արտացոլված արժեքները խիստ համահունչ են մարդկանց երազանքներին և իդերին, առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ ժամանակակից քաղաքական կյանքում նմանատիպ նախագծերը հաճախ օգտագործվում են որպես զանգվածներին գայթակելու և նրանց վարքն ուղղորդելու մանիպուլյացիայի գործիքների:

○ Հանգամանորեն վելրուծելով արդի տեղեկատվական հասարակության, վիրտուալ իրականության ձևավորման միտուաններն ու հետևանքները, հիմնավորվել է այն թեզը, որ հետարդիականության շրջանակներում առաջադրված ուսուափական նախագծերը, թեև պահպանում են դասական ուսուափաններին բնորոշ մի շարք գծեր,

բայց դնում են ոչ թե նոր սոցիալական համակարգի կառուցարկման խնդիր, այլ այն-պիսի խնդիրներ, որոնք առնչվում են մարդու անմիջական կենսախնդիրներին (պրակտորափառ), նրա ինքնազգացողությանն ու ապրելու կարողությանը (էու-պիշտեաներ) և այլն:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Վերլուծելով ուսուափայի՝ որպես իդեալական հասարակության մոդելավորման սոցիոմշակութային նախագծի ձևավորման պատճառներն ու շարժադրությունը, ինչպես նաև նմանատիպ նախագծերի դրսորման հնարավոր ձևերը, համարդելով իհմախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետներն ու հայեցակարգերը՝ պաշտպանության են ներկայացվել ներքոնշյալ դրույթները.

○ Ուսուափային դիտարկելով որպես իդեալական հասարակության կառուցարկման սոցիոմշակութային նախագծի՝ առաջադրվել է այն դրույթը, որ, ի տարբերություն «ապագայի մոդելավորման» սոցիալ-քաղաքական այլ նախագծերի, ուսուափայի դասական հայեցակարգերը թեև ձևավորվում էին գործող կարգերի քննադատության արդյունքում, բայց գլխավորապես հանդես էին գալիս որպես «լրասավոր ապագայի» մասին տեսական-գեղարվեստական պատկերացումների համակարգեր, որոնք նաև այնքան անհրագործելի էին, որ գրեթե հավասարագոր էին «երբեքի»:

○ Առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ իդեալական հասարակության մասին ուսուափային նախագծերը կազմված են երեք բաղկացուցիչ մասերից. 1) քննադատական (հրականության վերլուծում և մերժում), 2) նախագծային (ապագա հրականության մոդելավորում) և 3) կառուցղական (նախագծի իրագործման փուլ):

○ Ուսումնասիրելով ուսուափային ձևավորման պատմությունը՝ ատենախոսը հիմնավորում է այն դրույթը, որ ուսուափական նախագծերն առավել հաճախ ստեղծվում են սոցիալական կյանքի անցումային և ճգնաժամային փուերում և որոշ իմաստով կարող են հանդես գալ որպես սոցիալական համակարգի ճգնաժամերի ախտանիշներ և կյանքի կազմակերպման տվյալ մշակույթի անկատարության ցուցիչներ:

○ Ուսումնասիրելով ուսուափայի և հակառատուափայի առանձնահատկությունները, առաջադրվել է այն փաստարկը, որ հակառատուափայիները «նախազգուշացնող ուսուափայիներ են», որոնք մատնաշում են արդեն իսկ առաջադրված ուսուափայիների իրագործման հնարավոր բացասական հետևանքներն ու արդյունքները:

○ Սոցիալական կեցությանը բնորոշ երկու կարգի տրանսցենդենտալ պատկերացումների (ուսուափայիների և գաղափարախոսությունների) համեմատական վերլուծության արդյունքում առաջադրվել է այն դրույթը, որ եթե գաղափարախոսական տրանսցենդենտալ պատկերացումները, որպես կանոն, փորձում են ոչ թե արմատապես փոխել գոյություն ունեցող սոցիալական կարգը, այլ կատարելագործել այն, ապա ուսուափական տրանսցենդենտալ պատկերացումները (ուսուափայիները) միտված են գործող սոցիալական համակարգի արմատական վերափոխմանը: Այսինքն՝ եթե գաղափարախոսությունն իրականության «քողարկման» եղանակ է, ապա ուսուափական՝ «քողազերծման»:

○ Ենելով այն հանգամանքից, որ ուսուափայիներն իդեալական հասարակության նախագծեր են և առաջարկում են առկայից որակապես տարբերվող և կատարյալ ա-

պագայի մորել, առաջադրվել է այն դրույթը, որ այդ նախագծերը երբեմն քաղաքական համակարգի կողմից օգտագործվում են որպես մարդկանց վարքի ուղղորդման և մանհապույացիայի միջոցներ:

○ Առաջադրվել է այն դրույթը, որ եթե դասական ուսուպիտաները ավարտուն հասարակարգի մասին գեղարվեստական երևակայության արդյունքում ծնված և իրատեսական հիմքեր չունեցող «վեսելք» էին, ապա ժամանակակից ուսուպիտական նախագծերը նման են սոցիալական իրականության կոնսորտիումների, որոնք դարձել են կենսական հնարավորությունների բացահայտման և իրագործման իրատեսական նախագծեր:

Աղենախոսության գեսական և գործնական նշանակությունը: Աստենախոսության մեջ առաջադրված տեսական խնդիրները, կատարված ընդհանրացումներն ու եզրահանգումներն ունեն մի շարք տեսական և գործնական նշանակություններ, ինչի շնորհիվ կարող են օգտակար լինել հետևյալ նպատակներով՝

○ լրացնել և հարստացնել սոցիալական փիլիսոփայության տեսական շտեմարանը առաջադրված հիմնախնդիր վերաբերյալ,

○ կատարել մեթոդաբանական ուղեցույցի գործառույթ ուսուպիայի վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական վերլուծություններում և ուսումնասիրություններում,

○ օգտագործել մերօրյա սոցիալ-քաղաքական գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրություններում,

○ կիրառվել սոցիալ-փիլիսոփայական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, մշակութարանական, գրականագիտական հետազոտություններում,

○ օգտագործել մշակութարանության, քաղաքական և սոցիալական փիլիսոփայության, գրականագիտության, պատմության փիլիսոփայության ուսումնական դասընթացների առարկայական ծրագրերում:

Աղենախոսության փորձաքննությունը: Աստենախոսության նախնական տարրերակը ըննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի 2017թ. նոյմբերի 22-ի նիստում, իսկ նույն ամբիոնի 2018թ. մարտի 28-ին կայացած նիստի ընթացքում ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության։ Աստենախոսության հիմնական դրույթներն ու գաղափարները ներկայացվել են՝

○ ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի սեմինար ընսարկումներում (2012-2017թթ.),

○ ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան նստաշրջանի շրջանակում՝ նվիրված << անկախության 25-րդ տարեդարձին (ապրիլի 25-29, 2016թ.),

○ ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի շրջանակներում՝ նվիրված ֆակուլտետի 50 ամյակին (հոկտեմբերի 10-12, 2014թ.),

○ ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Արդիականություն և առօրյա: ժամանակի փիլիսոփայական անդրադարձը» համալսարանական գիտաժողովի ընթացքում (մայիսի 23, 2013թ.).

- հեղինակի գիտական հորիվաճներում:

Արենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնցից յուրաքանչյուրն ունի չորս Ենթագլուխ, Եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 142 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐԱՎՈՐԻ ՀԵՂՋՈՒՅՑ

Ներածությունում հիմնավորվել է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացվել է գիտական մշակվածության աստիճանը, առաջ են քաշվել հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույց պարունակող դրույթները, հիմնավորվել է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «**Ուսուպիան որպես այլրնտրանքային սոցիալ-քաղաքական նախագիծ»», նվիրված է ուսուպիային և ուսուպիական գիտակցությանը բնորոշ առանձնահատկությունների վերհանմանը, ուսուպիայի՝ որպես ապագայի մողեկավորման միջոցի վերլուծմանն ու նրա այլրնտրանքայնության ցուցադրմանը, առաջացման նախադրյաներին, ուսուպիայի և նրա հակադիր բների՝ հակառապիայի հարաբերակցությանը:**

«**Ուսուպիան որպես սոցիոմշակութային երևոյթ» ենթագլխում ներկայացվում է ուսուպիայի ընդիհանուր սոցիոմշակութային բնութագիրը, նրա առանձնահատկություններն ու պատմական զարգացման էվոլյուցիան: Մարդկային պատմության գրեթե բոլոր դարաշրջաններում կարելի է գտնել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ուսուպիական զանազան նախագծեր, որոնք թեև ունեցել են իմաստային տարրեր ծանրաբեռնվածություն, բայց իրենց մշտական առկայությամբ փաստում են, որ ուսուպիական գիտակցությունը մարդուն ներհատուկ մտածելակերպ է: Եվ դա պատահական չէ, քանի որ ուսուպիան առկայից լիովին տարբերվող մեկ այլ իրականության և սկզբունքներն այլ օրինաչափություններով կյանքի կազմակերպման սոցիոմշակույթը է, որի առաջադրած իդեալական հասարակության նախագիծը բխում է սոցիոմշակութային տվյալ իրականության առանձնահատկություններից և արտահայտում է տվյալ դարաշրջանում արդարության, հավասարության և ազատության մասին մարդկության պատկերացումների ու երազանքների բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ իդեալական հասարակության ուսուպիական նախագծերն արտացոլում են տվյալ դարաշրջանի ողին, ապագայի տեսլականը, համոզմունքներն ու հոյսերը: Ուսուպիական մողեկները պարունակում են տվյալ ժամանակների հասարակական-քաղաքական համակարգին բնորոշ այն գծերը, որոնք, սակայն, ուսուպիայում այնպես են վերափոխվում, որ բացասական կողմերը հնարավորինս դրւում են մղվում, իսկ դրականները հասցվում են բացարձակի:**

Ուսուպիաները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ դասական ուսուպիաներ (քաղաքական, սոցիալական, տեխնածին, «մարդու իդեալական վիճակը» վերակերտող և «պետության իդեալական քաղաքացուն» նկարագրող ուսուպիաներ և այլն) և ոչ դասական ուսուպիաներ (Էկոուսուպիաներ, Էուպիխիեաներ, պրակտոպիաներ և այլն):

Երկրորդ՝ «**Ապագան որպես սոցիալական աշխարհի կառուցարկման նախագիծ»», ենթագլխում ապագան վերլուծվում է որպես մարդկային գոյության անհայտ և դեռ չգոյող ժամանակահատված, որը միշտ կարևորվել է մարդու կողմից՝**

դրան տալով հնարավորի և անհնարինի իրագործման առավելություններ, քանի որ դա այն կենսատարածքն ու կենսաժամանակն է, որը կարող է արդարացնել սեփական կյանքի և սոցիալական միջավայրի վերաբերյալ մարդկանց սպասելիքներն ու հոգսերը: Ասպագան կարող է լինել այն ժամանակահատվածը, որը նորովի կկառուցարկի սոցիալական աշխարհն ու կստեղծի սոցիալական այնպիսի տարածություն, որտեղ մարդը կարող է գործել և կյանքի պայմանները վերափոխել ցանկություններին և սպասելիքներին համապատասխան: Այս առողջով իդեալական հասարակության ուստոպիական նախագծերը միաժամանակ հանդես են գալիս որպես գործող սոցիալական համակարգի թերությունների և արտաների քննադատական հայցակարգ, որը ոչ միայն ուրվագծում է ապագան, այլև մատնանշում նրա «ինչպիսին չինելու» հանգամանքները: Այլ կերպ ասած՝ ապագայի կառուցարկման ուստոպիական նախագծերը ոչ թե պարզապես բացասաւ են գործող կարգերը, այլ առաջադրում են կյանքի կազմակերպման այլընտրանքային, սկզբունքորեն նոր մշակույթ:

Ինչ վերաբերում է հետարդիականությանը, ապա կարելի է փաստել, որ ժամանակակից քաղաքակրթությունը առաջադրում է այնպիսի ուստոպիական նախագծեր, որոնք թեև պահպանում են դասական ուստոպիաներին բնորոշ մի շարք առանձնահատկություններ, բայց արտահայտում են արդի համաշխարհայնացման գործնարարությունը համատեքստում ծագած մարտահրավերներից ածանցյալ խնդիրների լուծման հեռանկարների բնույթը ու բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ առաջադրվում են ուստոպիական այնպիսի նախագծեր, որոնք առավելապես առնչվում են մարդու անմիջական կենսախնդիրներին (պրակտոպիա), նրա ինքնազգացողությանն ու ապրելու կարողությանը (էուպիսինեաներ) և այլն: Հետարդիականությանը բնորոշ ուստոպիական նախագծերի առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք նման են սոցիալական իրականության այնպիսի կոնստրուկտների, որոնք դարձել են կենսական հնարավորությունների բացահայտման և իրագործման իրատեսական նախագծեր:

Երրորդ՝ «Ուստոպիան որպես սոցիալական ճգնաժամի ախտանիշ», ենթագիսում քննարկվում են ուստոպիայի առաջացման պատճառներն ու նախադրյալները, ցուց է տրվում, թե նման նախագծերն ինչ դերակատարում, կարող են ունենալ սոցիոմշակութային կյանքում: Ենթագիսում հիմնավորվում է այն դրույթը, որ ուստոպիական գիտակցությունն ու սոցիալական երևակայությունը ակտիվանում են հասարակության հատկապես ճգնաժամային, անցումային և արմատական փոփոխակերպումների փուլում, ինչը վկայում է, որ ուստոպիական նախագծերը ոչ միայն իդեալական հասարակության տեսական կոնստրուկներ են, որոնք արտահայտում են մարդկային մտքերի ու երևակայության տարատեսակ ծգտումները, այլև հանդես են գալիս որպես տվյալ դարաշրջանի և տվյալ հասարակության «հիվանդությունների» ախտանիշ և նոյնիսկ՝ դեղատում: Հատկանշական է, որ ուստոպիայի իմաստային ծանրաբեռնվածությունը դուրս է գալիս առկա սոցիալական համակարգի կենսիմաստային նարատիվներից և հաճախ ժամանակակիցների համար միանգամայն անիրական է թվում:

Հարկ է նկատել նաև, որ ուսուպիան յուրատեսակ մի ցուցիչ է, որը գալիս է փաստելու, թե տվյալ հասարակությունը որքանով է կենսունակ և որքանով է ունակ ստեղծելու տցիալական այնպիսի աշխարհ և այնպիսի կենսիմաստային ուղղորդիչներ, որոնք կնպաստեն տցիալական համակարգի առաջընթացին: Այլ կերպ ասած՝ ճգնաժամային իրավճակներում ուսուպիական նախագծերը տցիալական հիվանդությունների բուժման դեղատոմսեր առաջադրող և բուժման եղանակներ նախանշող տեսական համակարգեր են, որոնց թիվն ու անհրաժեշտությունը զգային որեն պակասում է տցիալական կյանքի հարաբերականորեն կայուն զարգացման և առաջադիմության շրջանում, քանի որ նվազում են իդեալական իրականության մոդելավորման տցիալ-տնտեսական պատճառներն ու շարժադրիթները: Այսպիսվ՝ ուսուպիանների առաջադրման հիմքում ընկած են որոշակի տցիալ-հոգեբանական ապրումներ ու զգացումներ: Հոյսն ու հուահատությունն ուսուպիաններին սնող աղբյուրներն են:

Լայն առումով կարելի է եզրահանգել, որ ուսուպիան մարդկային գիտակցության և նրան շրջապատող իրականության միջև առաջացած անհամատեղիկության հետևանք է, եթե մարդին այլևս չի կարողանում ընդունել և հասկանալ տվյալ տցիոնշակութային տարածությանը բնորոշ տրամաբանությունն ու զարգացման ընթացքը: Ծնված նոր գաղափարների և ծրագրերի ամենաէական խնդիրն այն է, որ նպաստեն կենսական նոր պայմանների ձևավորմանն ու տցիալ-քաղաքական համակարգը դնեն նոր հիմքերի վրա: Այսպիսին է ճգնաժամային հասարակության տցիոնշակութային պահանջը, և ամեն մի ուսուպիական նախագիծ ածանցվում է տվյալ պատմական դարաշրջանի տցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակից: հանգամանք, որ մեկ անգամ ևս փաստում է ուսուպիանների տցիալական ճգնաժամների ախտանիշի լինելու իրողությունը:

Չորրորդ՝ «Ուսուպիայի և հակառակուպիայի գործառական առանձնահատկություններն ապագայի մոդելավորման նախագծերում», ենթագիսում քննարկվում են ուսուպիայի և հակառակուպիայի փոխհարաբերությունները, դրանց նմանություններն ու տարբերությունները: Ցոյց է տրվում, որ հակառակուպիան ուսուպիայի տարատեսակ է և հանդես է գալիս որպես նրա տրամաբանական շարունակություն: Եթե ուսուպիական նախագծերում հստակ ընդգծվում են տցիալական առաջընթացի հանդեպ մարդկային հոյսներն ու սպասելինները, ապա հակառակուպիան ցուցադրում է այդ հոյսի մարումն ու կորուսոր՝ բացահայտելով ու բացատրելով տվյալ ուսուպիական նախագծի իրագործման հնարավոր բացասական հետևանքները: Ուսուպիական նախագծերի քննադատական վերլուծությունը փաստում է, որ դրանց առաջադրումից որոշ ժամանակ անց ձևավորվում են այդ նախագծերի հականախագծերը՝ հակառակուպիանները, որոնց ներսում այնուամենայնիվ պահպանվում է ուսուպիայի «բնագիրը», որը նաև ծերբազատված է անհիմն լավատեսությունից և պատրանքներից: Այս տեսակետից կարելի է ասել, որ հակառակուպիան կարծես դասական ուսուպիայի ծաղրանմանակումը, վերջինս հիմնարար իդեալների (հակասարություն, երջանկություն, ազատություն և այլն) քննադատությունը լինի: Գլխավոր քննադատության թիրախն ուսուպիայի ստատիկությունն ու ժամանակի մեջ առաջ

շարժվելու անկարողությունն է: Այս դեպքում հատկապես ընդգծվում է այն հնարավոր իրողությունը, որ ցանկացած կատարելություն իր վերջնակետում կարող է մարդկության համար ողբերգական ավարտ ունենալ, եթե տվյալ նախագիծը չունի իրագործման ռեալ հիմքեր և պարտադրվում է բռնի ուղիներով: Ինչպես ուսուայիցում, այնպես էլ հակառատոպահաներում ներկայացվում են ներկայի ճգնաժամային իրավիճակներն ու ընդգծվում, որ այդպես շարունակվելու դեպքում մարդկության ապագան կարող է ունենալ ողբերգական ավարտ: Միա թե ինչու «կատարյալ» բացասական սոցիալական աշխարհի մոդելավորող հակառատոպահան ունի կանխորոշղ գործառություն:

